

զրբերը կարելի է դրկել Տփխիս սրբազնի անօւնով :

Նորոգուած է նաեւ ջրի ազրիւրը, որը բոլորովին քանզուած էր եւ ջուր բերելու համար ահագին տարածութիւն պիտի գնային . իսկ այժմ դիւղի եւ վանքի համար կոյ ջուր։ Վանքը շրջապատուած է ժամանակաւոր պարսպով եւ , ինչպէս լսեցի . որբազանը մտադիր է շրջապատել ամուր պարսպով :

Վանքի բակում , հիւսիսային կողմբ, վանահօր բնակարանի կողքին եղած դատարկ տեղը, որ եղնջի ու եօնջայի համար էր թողուած, նոյն պէս մաքրուած է եւ փոքրիկ պարտէղ է տնկուած։ Մաքրուած է եւ ծաղթակերով շրջապատուած Գուրգէն արքայորդու զերեկմանը :

Մէկ խօսքով ամենայն ինչ իր տեղումն է : Մաքրուած են հողից ու խոսերից՝ վանքի մօտ եղած Արդութեանց գամբարանը , Տուաէորդու մատուոր . խաչքարերը եւայլն եւ այլն :

Քազցր տպաւորու թեան տակ թողի Սանահինը : Գիւղի մէջ ինձ շրջապատեցին զիւղացիները, որոնք միաբերան օրնում էին Սրբազնա հօրը եւ ասում, որ նրա գալու օրից իրենց տնտեսական զրութիւնը բռնորովին լաւաց' է . եւ որ գիխաւորն է, վանքի նորոգութեան ժամանակ հրանք են օգտուել ու բանել :

Ես կը ծանօթացնեմ շուտով «Բանասէր» ընթերցողներին, Գարեգին սրբազնի կենսագրու թեան հետ :

Առ այժմ Սանահինի վանքն է շինուած, նորոգուած, կարդի բերուած, սակայն որքա՞ն վանքեր կան, որոնք կիսաւեր են մեացել եւ Սաթունիաների կարօտ :

Իշխ. ՀԱՅԿ ՀԱՅԿԱԶՈՒՆԻ

ՊՈՒՍԱՀԱՅ ՆՈՐԱԳՈՅՆ ԲԱՆԱՍԵՂՄԱԿԱՆ ԴԷՄԹԵՐ

Յակոբ Յակոբեան

1866 թ. մայիսի 17-ին ծնուել է Գանձակամ եւ ուսումը ստացել է այնտեղի գիմնազիօնում։ Հայրը եղել է բուն Ղարաբաղցի, որ տեղափոխուելով Գիւղի ստան կոչուած մէալից՝ ամուսնացել է Գանձակում։ Դեռ զիմնազիօնում ուսանող ժամանակ Յակոբեանը սկսել է ուսանաւորներ գրել 1881 թուականը սկսած եւ մասնակցել է աշակերտական «Ծոյս» ամսաթերթին։ 1893ին Թիֆլիս վերաբնակուելով սկը-

սում է աշխատակցի հին «Մուրճ»ին, որպէս մշտական աշխատակից քանաստեղծականի բայնում, «Մշակ»ին Գ. Արձրունու եւ երեսին այժմհան խմբագրութեան օրերով, Պարսկաստանի Շնաւ իզարին, երբ խմբազրվում Վ. Փափառեանի ծեռք վ, իսկ 1902 թուականից նոր «Մուրճ»ին եւ մեր «Զգացմունքին» 1899 թուբն լոյս է տեսել իր առանձին դրչոյկը «Բանաստեղծութիւններ» վերնազրով և Այս զրչոյկը բաղկացած է 80 էջ, բովանդակելով 37 ոտանաւորներ, որոնցից եօթը թարդմանական են Ֆրուզից, Բիէրնասնից, Գեօթէից, Նազանից, իսկ երեսունը ինքնուրոյն Կարդալով ինքնուրոյն ոտանաւորները, ճիշտն ասած, Յակորեանը սկ սն ակ եւ ճոխ երեւակայութիւնից զուրկ բանաստեղծ է թուում մեղ, ոչ և առուն մաքի տպաւորութիւն թսղնելով մեջ վրայ, որի մասին արգէն իրենց աննպաստ կարծիքներն են յայտնել Ա. Բերբերեան, Մ. Արեղեան Նոր-Դարբում եւ Ն. Քարամեան «Առևմայրում» Սրբնակի համար վերցնենք «Եղջուկի վախր» (էջ 31)։

Բիւր ցաւերիս բերիր նոր ցաւ ։

Ա՛յ շարազոյք զու սեւ ապօաւ,

Տաղնապալից նեղ օրերի

Շարքը մի՞թէ դեռ չի անցաւ . . .

Թէ ծագի օր, դու մի նոր թօթ

Պիտի գուժես սրախս ցաւոտա . . .

Կուաւոցդ մինչ ե՞րբ աների,

Դէ՛ն ինչ անեմ, չտնիս ամօթ . . . եւ այլն :

Այստեղ դուք չէք տեսնում զեղարուեստական պատկեր, ոգելից վառ սրամազրութիւն, զգացմունքի խորութիւն եւ իղէայի ներդաշնակութիւն, այլ միայն ծեծուած, մակուած բառեր բոնազրոսիկ շարանիոսութեան, Բանաստեղծը երկնային այնպիսի կայծով պիտի բորբոքուած լինի եւ իր յուզման զգացմունքները ու զեղմունքները այնպէս պիտի դուրս բզիսեցնէ իր ներքին աշխարհի ծալքերից, ինչպէս հրարութնէ լաւա այսթքում զետնի խորքերից՝ ճեղքելով հսկայական լեռներ, եւ նա այնպէս պիտի ազգէ ընթերցողի վրայ ու խաղայ նրա զգացմունքների հետ, ցնցում առաջ բերելով ջղերի մէջ ինչպէս վարժ եւ փափուկ ձեռքերի մատներն են սահուն թորիչքներ զործում դաշնամուրի գողարիկ հնչուող լարերի վրայ, Կալով թարգմանականներին, չեմ կարող թագցնել, որ աւելի յաջող են ինքուրոյններից, Վերջերս նա տալիս է ոտանաւոր թարգմանութիւններից Ֆրուզից եւ Աղա-Նեկրիից, Յակորեանը միայն թարգմանականի մէջ յուսալի կարողութիւն է ցոյց տալիս, Այդ ճիւղում նա կարող է օգտակար լինել հայ գրականութեան :

ԳՐԻԳՈՐ ԲԱԼՈՍՍԱՆԵՍԻՆ